



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՍԴՅԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒԻՅ

Սույն թվականի սեպտեմբերի 27-ին, կիրակի օրը, Վարագա Ս. Խաչի տոնին, հավարտ և պատարագի, Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի է ունենում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի ծննդյան 79 և գահակալության 22-րդ տարեդարձներին նվիրված ընդունելություն-ճաշկերույթ:

Սույն հանդիսությանը ներկա էին արտասահմանի և ներքին մի շարք թեմերի առաջնորդ պրազման հայութ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունն, ու պաշտոնելությունն, Մայր Աթոռու բարերարներ, Հայատանի մտավորականության ներկայացուցիչներ և բազմաթիվ այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինհատրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստ. Վարդանյանը և տեղակալ տիար Ռ. Զարգարյանը:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վեհափառ Հայրապետի գույգ տարեդարձները շնորհավորում և բարեմայնության խոսք է ասում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպո. Մանուկյանը՝ մայթեղով Վեհափառ Հայրապետին արդյունաշատ և հովվապետական բազում բեղմնավոր տարիներ, ին հաջողություններով և նորանոր ծրագրերի իրագործմամբ:

Այնուհետև խոսք է առնում Հայկական ՍՍՀ Մինհատրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստ. Վարդանյանը, որը, շնորհավորելով Վեհափառ Հայրապետին գույգ տարեդարձների առջիվ, մայթում է արևաշատ բազում տարիներ, միաժամանակ վեր հանում ազգային և մշակութային առումով Նորին Սրբության գահակալության երեսուներկու տարիների ընթացքում ձեռք բերված հաջողությունները, իրագործված շինարարական ծրագրերը:

Աւաս Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի բարձր պարգևն է հանձնում Երևանի Շնորհակառուց առաջնորդարանի բարերարներ թերթիահայ տեր և տիկին Ժան և Սոնա Արաշյաններին:

Ի դիմաց Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախմբի, ողջուզնի խոսք է ասում տիար Վարագդատ Հարությունյանը:

Հայաստանի մտավորականության անունից Վեհափառ Հայրապետի գույց տարեդարձները շնորհավորում և բարի մաղթանքներ է կատարում բանաստեղծութի Սիլվա Կապուտիկյանը:

Խոսք է առնում նաև Սիլյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ տիար Կ. Դալլաքյանը:

Հայոց Հայրապետի և Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության հանդեպ արգենտինահայության որդիական սերն ու ակնածանքն է հայտնում Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ գերազնորի Տ. Գրիգորին եպս. Բութիաթյանը: Սրբազն հայրը հատկապես ջնդգծում է, որ Վեհափառ Հայրապետը, իր շինարարական գործունեությանը զուգահեռ, հասցըրեց նաև հոգնոր սերունդներ, որոնք ձեռնհասորեն իրենց ծառայությունն են թերում ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ արտասահմանի զանազան թեմերում:

Մայր Աթոռի միարանության անունից ելույթ է ունենում դիվանապետ գերազնորի Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանը՝ հայտնելով միարանության հավատարմությունը և անկեղծ սերը հանդեպ Հայոց Հայրապետի:

Վերջում շնորհակալության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը.

«Ես ոգում եմ իմ շնորհակալության խոսքն ասել մեր պետության ներկայացուցիչ պարուն Ստեփան Վարդանյանին և հարգարժան խոսք առնողներին, որոնք բոլորը անդրադառն երեսուներկու տարիների իմ գործունեության և ջերմ բարեմաղթություններ արեցին ինձ: Այս առիթով հիշեցի անգլիական կյանքից մի պատմական պարագա անցյալ դարու վերջերին նշանավոր պետական-հասարակական գործից Վիլյամ Պիտի մասին: Երբ տոնախմբում էին նրա գործունեության հորեղանը, ներկաները նրան գովերգում էին անշուշտ: Մեկը գովում էր նրա իմաստությունը, մեկ որիշը՝ դիվանագիտությունը, մեկ որիշը՝ նրա քաջությունը, արդարությունը և այլն: Պիտի իր պատասխանի մեջ հետևյալն է ասում. «Ես լսեցի ձեզ, բայց մեկ բան դուք չասացիք, որ իրապես իմ նիմնական արծանիքն է իմ համբերությունը»: Ես կարող եմ ասել, որ իմ պարագային էլ այսպես է: Համբերություն բառը բացասական ձևով պետք չէ հասկանալ, որովհետև համբերությունը ենթադրում է հավատ, վստահություն և լավատեսություն: Երբ համբերում ես, գիտես, որ գործդ պիտի հաջողի վերջ ի վերջո, նույնիսկ եթե որոշ դժվարությունների հանդիպես: Այդ գաղափարի վրա ես կուգեի ավելացնել մեկ որիշը ևս իմ պարագայի համար: Այն, որ այստեղ գալուց հետո ես շատ արագ կերպով, ես ինք էլ զարմացա, կերպարանափոխվեցի: Իմ նախկին վերապահումները, երկողները, հայացքները մի կողմ մնացին և մոռացվեցին, և ես անձնատոր եղա, ճիշտ բառն եմ օգտագործում, անձնատոր եղա Էջմիածնի խորհուրդին և հայրենի հողին: Այսպես իմ առջև ճանապարհ բացվեց և կարողաց իրագործել այն, ինչ որ դուք գիտեք: Անշուշտ, սակայն, ես մի քիչ էլ բախտավոր եղա, որ այն վերակառուցումք, որի մասին խոսում են հիմա,

այդ վերակառուցումը, եկեղեցական տեսակետից, մեզ մոտ այն օրվանից սկսվեց, հենց առաջին պահից, Հրաշյա Գրիգորյանով, հետո մյուս Խորհրդի նախագահներով, մինչև այսօր: Որովհետև մեր Խորհրդի նախագահները, ճիշտ է, անոնները փոխվեցին՝ Հրաշյա Գրիգորյան, Գասպարյան, Դալլարյան, Պարսամյան, հիմա՝ Վարդանյան, բայց այդ բոլոր անոնների ետև կար մեր պետության բարյացակամ վերաբերմունքը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին. Այնպես որ ես գանգատվելու ոչ մեկ պատճառ չունեմ, արդար պետք է լինել: Եվ պետք է գործություն տաս Աստուծո, որ այս ժամանակների մեջ այստեղ պաշտոնի կոչվեցի՝ վայելելով նաև գործակցությունը իմ հոգևոր եղբայրների, աշխարհական պաշտոնյաների, ճարտարապետների: Ճարտարապետները խկացես մեծ գործ կատարեցին: Նրանք բոլորն էլ սքանչելի մարդիկ էին, սրտցավ, նվիրված, անշահախնդիր, մեր ժողովրդին ծառավելու գիտակցությամբ, որոնք անգնահատելի գործ կատարեցին: Ես կաղոթեմ առ Աստված, որպեսզի տա մեզ ժամանակ տակավին, որպեսզի կարողանանք շարունակել մեր սկսած գործը: Շնորհակալ եմ նաև այն բարեմայթությունների համար, որ կատարվեցին իմ արտասահման ուղևորության կապակցությամբ: Պիտի աշխատեմ ես և իմ հետ եկողները՝ մեր պարտքը կատարել մեր Եկեղեցվո, մեր ժողովրդի, մեր հայրենիքի հանդեպ և երբ որ վերադառնանք ողջ-առողջ, պիտի պատմենք այդ բոլորի մասին: Մենաք խաղաղությամբ».

Ծաշկերութիւն ավարտին ներկաները բարի ճանապարհ մաղթեցին Վեհափառ Հայրապետին և հաջողություն ցանկացան իր Աստվածահան առաքելության մեջ:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան 79 և գահակալության 32-րդ տարեդարձների առթիվ՝ մաղթելով Նորին Սրբությանը երկար տարիների քաջառողջ կյանք և հովվապետական արգասարեր գործունեություն՝ ի փառ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի:

